**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**ՆԱԽԱԳԱՀ**

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 522522, ՖԱՔՍ (374-10) 525563

« 06 » 06 2023 թ.

№ ԳՔ/34.4-Մ2-1/1856-2023

***«ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ի փնօրեն***
***Վ.Ներսիսյանին***

Հարգելի պարոն Ներսիսյան,

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի N103Ն որոշման համաձայն՝ «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ն մինչև սույն թվականի ապրիլի 20-ը հանձնաժողով պետք է ներկայացներ նույն որոշմամբ հաստատված ձևերով 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, սակայն ներկայացրել է սահմանված ժամկետից հետո՝ 2023 թվականի ապրիլի 26-ին:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ թեև «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի N103Ն որոշման պահանջը, այդուհանդերձ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին հանձնաժողովի համապատասխան որոշման ընդունումը «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ն վերացրել է խախտումը՝ 2023 թվականի ապրիլի 26-ին ներկայացնելով 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ

կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, հանձնաժողովի գնահատմամբ առկա է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված վարչական վարույթի չհարուցման հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և հաշվի առնելով նաև, որ ընկերության կողմից նախկինում նման խախտում թույլ չի տրվել, հանձնաժողովը նպատակահարմար է գտնում կիրառել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հանձնաժողովին վերապահված իրավասությունը և չհարուցել վարչական վարույթ:

Միաժամանակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը տեղեկացնում է, որ նշված տեղեկատվությունը 2005 թվականի հուլիսի 26-ի N103Ն որոշմամբ սահմանված ժամկետում հետագայում ևս չներկայացնելու դեպքում «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ի նկատմամբ կհարուցվի վարչական վարույթ և կկիրառվեն «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները:

***Գ. Բաղրամյան***

6/6/2023

X

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

**Կատարող՝ Լուսինե Խեչումյան ☎ (010) 52-85-77 (324)**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԳԲ/34.4-Մ2-1/1856-2023պ/տ

Յաuուլյեր գանձված է / Tax perçue HAYPOST

L0109789882AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ
RETURN
CN15

- [ ] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [x] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ] 2

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date

«ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Մոլդովական 36, բն 31


ARMENIA
YEREVAN
0062
0 8 JUN 2023


YEREVAN
ARMENIA

CN 07

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

**A.R.**

Ծառայողական/
On postal service

Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

| Առաքանու հասցեատեր/ Addressee of the item | «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Մոլդովական 36, բն 31 |
|---|---|

**Առաքանու բնույթը/Nature of the item**

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter
- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO109789882AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

| | |
|---|---|
| Անուն կամ գրասենյակի անվանում/ Name | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| Փողոց և թիվ/ Street and No | ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002 |
| Բնակավայր և երկիր/ Locality and country | Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ |
| | |

Լրացվում է ստացողի կողմից/To be filled in by the receiver

AL0109789882AM

**Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination**

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԳՓ/34.4-Ս2-1/1856-2023պ/ռ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am


ARMENIA
YEREVAN
08 JUN 2023


ARMENIA
YEREVAN